ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

17.01.2019Թ. ԿՆՔՎԱԾ N <<ՉՀ-ՄՉՀՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-19/2>> ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Չարենցավան <<17>> 01 2019թ.

**ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի <<Մաքուր Չարենցավան>> ՀՈԱԿ-ը**, ի դեմս տնօրեն **Վ. Աբրահամյանի**, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Գնորդ), մի կողմից, և <<**ՖԼԵՇ**>> **ՍՊԸ-ն**, ի դեմս Ընկերության տնօրեն **Յա. Խաչատրյանի**, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, հիմք ընդունելով 17.01.2019թ. կնքված N <<ՉՀ-ՄՉՀՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-19/2>> գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5-րդ և 8.13-րդ կետերը և այն հանգամանքը, որ փոփոխությունը չի դասվում ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 56-րդ կետով սահմանված արհեստական փոփոխությունների շարքին, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

## 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Հետագա համագործակցության նպատակով՝ Կողմերը որոշեցին՝

1.1 Հաստատել ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը՝ համաձայն կից հավելվածի (կցվում է):

1.2 Սահմանել, որ Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ վճարման ժամանակացույցով նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

## 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3 Սույն Համաձայնագրում Կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.4 Սույն Համաձայնագիրը և հավելվածը կազմված են 2 (երկու) էջից, կնքվում են հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

| <<ԳՆՈՐԴ>> | <<ՎԱՃԱՌՈՂ>> |
|---|---|
| ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի <<Մաքուր Չարենցավան>> ՀՈԱԿ | <<ՖԼԵՇ>> ՍՊԸ |
| ք. Չարենցավան Կ. Դեմիրճյան հրապարակ թիվ 1 | ՀՀ, ք. Երևան, Ե. Կողբացու 30 |
| <<ՎՏԲ-Հայաստան Բանկ>> ՓԲԸ | <<ԱՐԱՐԱՏԲԱՆԿ>> ԲԲԸ |
| Հ/Հ 16028014479300 | Հ/Հ 15100166690902 |
| ՀՎՀՀ 02809386 | ՀՎՀՀ 01808789 |
| | էլ. հասցեն flash@flashltd.am |
| | Հեռ. (37410) 53-42-33 |
| Տնօրեն՝ Վ. Աբրահամյան | Տնօրեն՝ Յա. Խաչատրյան |
| (ստորագրությունը) | (ստորագրությունը) |
| Կ.Տ | Կ.Տ |

Հավելված
17.01.2019թ. կնքված <<ՉՀ-ՄՉՀՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-19/2>> ծածկագրով
պայմանագրում փոփոխություններ կատարելու նպատակով
<<17>> 01 2019թ. կնքված համաձայնագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | Ապրանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ.-ին՝ ըստ ամիսների, այդ թվում՝ | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 09134200 | Դիզելային վառելիք | 609000 | 1218000 | 1740000 | 2088000 | 2436000 | 2827500 | 3175500 | 3523500 | 3915000 | 4480500 | 5046000 | 5655000 | 5655000 |

*Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով

<<ԳՆՈՐԴ>>
ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի <<Մաքուր Չարենցավան>> ՀՈԱԿ
ք. Չարենցավան Կ. Դեմիրճյան հրապարակ թիվ 1
<<ՎՏԲ-Հայաստան Բանկ>> ՓԲԸ
Հ/Հ 16028014479300
ՀՎՀՀ 02809386

Տնօրեն՝ Վ. Աբրահամյան
(ստորագրությունը)
Կ.Տ.

<<ՎԱՃԱՌՈՂ>>
<<ՖԼԵՇ>> ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Ե. Կողբացու 30
<<ԱՐԱՐԱՏԲԱՆԿ>> ԲԲԸ
Հ/Հ 15100166690902
ՀՎՀՀ 01808789
Էլ. հասցեն flash@flashltd.am
Հեռ. (37410) 53-42-33

Տնօրեն՝ Հայ. Խաչատրյան
(ստորագրությունը)
Կ.Տ.